բժիշկ։ Եւ որքան կարողութիւն մեր էր՝ ջանացաք, եթէ թղթով և եթէ բանիւ, ընդ դեսպանաց թագաւորաց. և զկնի, զայն Գրիգոր եպիսկոպոսն առաքեցաք, իբր թէ տեղացի է, և զտեղոյդ որպիսութիւնն գիտէ, լինի թէ հնար մի առնէ. նովաւ եւս ոչ եղեւ հնար։ Եւ իբրեւ տեսաք թէ ուստեք հնար ոչ լինի, թէպէտ ի բազում ժամանակաց ունէաք փափագ զՍուրբ Տնօրինական տեղին Քրիստոսի տեսանել զգալի աչօք, ապա առաւելագոյն վասն ձեր՝ ելաք ի սուրբ աթոռոյն, ծերացեալ մարմնով, և կատարեալ զուխտ մեր իջաք ի Կոստանդինուպօլիս, զայս ունելով ի մտի, իբր թէ այլ հուպ է ձեզ, իցէ զի աստուստ բան հոգացուք. և աստ եւս բազում աւուրս զննեցաք. ձերոց հնարից, զայս գտաք ըմբռն. եթէ դուք եւս ըստ հրամանաց մերոց վարեսջիք։ Զի ահա զսիրելի և զհոգեւոր որդեակն մեր, աջ բազուկ և նեցուկ սրտիս՝ զՏէր Յոհան վարդապետն և արհեպիսկոպոս, որ էր կարի պիտանի և հարկաւոր մեզ, բայց վասն ձերոյ օգտի առաքեցաք՝ սակս այսքան պատճառաց։ Նախ, վասն եկեղեցեաց ձերոց հնարից. երկրորդ, վասն քարոզելոյ և ուսուցանելոյ. երրորդ, վասն նուիրակութեան. չորրորդ, վասն կտակաց։ Վասն որոյ խնդրեմ ի հարազատ որդիութենէ ձերմէ, զի այս պատուէր՝ վերջին պատուէրն է. և ի մէնջ առաջին և յետին աւրհնութեան թուղթս այս. որ թէ կամիք զաւրհնութիւն ժառանգել, և զելս իրաց այդմիկ գտանել, ամենեքեանդ միաբան՝ եթէ եկեղեցականք թէ աշխարհականք, թէ դատաւորք թէ տօլվաթաւորք և թէ ռամիկք, միակամ միախորհուրդ և միաբան լիցիք, և ի միջոյ ձերմէ զխեռ և զնախանձ անհետ առնէք. ընդ միմեանս սիրով լիցիք. և յամենայն զօրութենէ և յամենայն մտաց վասն այդ բանիդ հոգասջիք։ Զի ի ձէնջ երկու բան հարկիւ պահանջեմ. նախ առաջին, միաբանութիւն. երկրորդ, հնազանդութիւն, որ զմեր պատուէրն կատարէք զոր պատուիրեալ եմք հոգեւոր որդւոյն մերոյ Յոհան վարդապետին. զի թէ զայս արասջիք, յոյս ունիմք յԱստուծոյ՝ որ վերջ լինի տառապանաց ձերոց, և ուրախութեան ժամանեսջիք փութապէս։ Յայտնի լինի ամենեցունց, որ մեր այլ հնար ոչ մնաց այսուհետեւ. ահա վերջին հնար այդ էր, որ մեր հոգեւոր որդի Յոհան վարդապետն առաքեցաք, որ է մտերիմ խորհրդակից մեր և հարազատ որդի. զմեր ամէն խորհուրդ ի դմանէ տեղեկասջիք լիով. և զձերն եւս դմա ծանուսջիք. և զոր ինչ սէր և հնազանդութիւն և պատիւ՝ զոր մեզ առնելոց էք, դմա արասջիք. զի դմա արարեալն՝ մեզ է արարեալ, ըստ Քրիստոսի հրամանին. և մանաւանդ ջանասջիք՝ որ մեր հոգեւոր որդվդ բան ինչ առնիցէք վասն ձեր եկեղեցեացդ. զի ահա այսքան ժամանակ էանց, երկու թագաւորք գնացին, Պապն եւս գնաց, և մեր լուսահոգի Մովսէս հայրապետն գնաց առ Քրիստոս. և մեք եւս ի դրունս մահու եմք հասեալ։ Վասն որոյ խընդրեմ ի սիրելի որդոցդ, զի որքան է հնար՝ ջանասջիք։ Թէ դաւանութեան կողմանէ բան ինչ խնդրէք, ահա ընդ Գրիգորի եպիսկոպոսին առաքեցաք. ի վերայ այդր դաւանութեան՝ ոչ առաւելացուցանելոց եմք և ոչ պակասեցուցանելոց. և որքան վասն անճարակութեան և հնար իցէ, որ թէ զիջանելոյ